ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Երեքշաբթի, 8 ապրիլի 2025 թ.

Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի նիստը

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի հերթական նիստը:

Նիստին ներկայացվել են Հայաստանի ազգային փոքրամասնությունների լեզուների մասնագետների պատրաստմանը և ազգայն փոքրամասնությունների երեխաներին ամեն տարի կազմակերպվող ամառային ճամբարների պետական ծրագրում ներառելուն վերաբերող հարցեր:

Օրակարգային հարցերի շուրջ ծավալվել է քննարկում, խորհրդի անդամները ներկայացրել են իրենց դիտարկումներն ու առաջարկությունները:

Արայիկ Հարությունյանը հանձնարարել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը մշակել լեզուների մասնագետների պատրաստման ծրագիր և ներկայացնել հաջորդ նիստին: Վարչապետի աշխատակազմի ղեկավարը նաև հանձնարարականներ է տվել վերոնշյալ հարցերի լուծման վերաբերյալ;

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայքէջ՝ www.primeminister.am
www.gov.am